ԱՇՈՏ ԱՐՍԵՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Վախճանվեց Երևանի Խ. Աբովյանի անվան Հշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, գիտության վաստակավոր գործիչ,

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ա. Աբրահամյանը։

Ծնվել է 1918 թ. Սևանի շրջանի Գեղամավան (Շահրիզ) գյուղում։ 1937—1944 թթ. ուսուցչական աշխատանք է կատարել Հրազդանի շրջանում։ Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետի հեռակա բաժինը 1943 թ. ավարտելուց հետո ընդունվել է նույն ինստիտուտի ասպիրանտուրան Հայոց լեզվի գծով և միաժամանակ դասախոսական աշխատանք կատարել Խ. Աբովյանի անվան և հեռակա մանկավարժական ինստիտուտներում։

1944 թ. նա անընդմեջ գրաբար, ժամանակակից հայոց լեզու, լեզվաբանության ներածություն է ավանդել հիշյալ բուհերում։ 1951—1959 թթ. համատեղությամբ վարել է ՀՍՍՀ ԳԱ ինստիտուտի արդի հայերենի բաժնի վարիչի պաշտոնը։ 1960 թ. ղեկավարել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը։

Մեծ է Ա. Աբրահամյանի գիտական վաստակը։ Նրա հետազոտական աշխատանքները երեք հիմնական ուղղություն ունեն։ Առաջինը լեզվաբանական-քերականագիտականն է։ Հայագիտության բնագավառը նա մուտք գործեց և ամուր տեղ գրավեց իր թեկնածուական դիսերտացիայով, որը պաշտպանեց 1948 թ. («Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը»)։ Այս աշխատության մեջ մանրամասնությամբ քննված են հայերենի դերբայների բառակազմական, իմաստային, կիրառական հատկանիշներով՝ հայերենի պատմության ընդհանուր ֆոնի վրա։ Այստեղ Ա. Աբրահամյանը առաջ է քաշել ընթացակցական դերբայի արժեքավորման խնդիրը։ Շարունակելով հետազոտությունները հայերենի բայի վերաբերյալ՝ նա 1963 թ. հրատարակեց «Մայր ժամանակակից հայերենում» ծավալուն աշխատությունը, որը և պաշտպանեց իբրև դոկտորական դիսերտացիա։ Սա ամփոփում է հայ քերականագիտության նրվաճումները քննարկվող խոսքի մասի ուսումնասիրության ուղղությամբ։ Այստեղ բայն ուսումնասիրված է ողջ համակարգով։ Նա առաջ է քաշել մի շարք նոր դրույթներ (բայակազմության երկու տեսակի՝ համադրական և վերլուծական, բայաստեղի նոր բմբռնման, մասնավորապես սեռադասերի և սեռերի, կրկնասեռության, բայածանցների վերաբերյալ և այլն)։ Այս հետազոտությունն իրավացիորեն գնահատվեց որպես նշանակալից ներդրում ժամանակակից գրական հայերենի բայի ուսումնասիրության մեջ։

Որոշակի կշիռ ունեն Ա. Աբրահամյանի ուսումնասիրությունները հայերենի պատմության առանձին հարցերի ուղղությամբ։ Հայոց լեզվի պատմությանը վերաբերող նրա աշխատանքների, ինչպես և դասախոսական գործունեության արդյունքը է «Գրաբարի ձեռնարկ» գիրքը, որը բուհական լավագույն դասագիրքն է և ունեցել է բազմաթիվ հրատարակություններ։

Ա. Աբրահամյանի գիտական գործունեության երկրորդ բնագավառը հայ մատենագիրների երկերի աշխարհաբար թարգմանությունը, ծանոթագրումն ու հրատարակումն է։ Այս ուղղությամբ

կատարած աշխատանքների մեջ անգնահատելի է Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի» հրատարակությունը (1970)։ Նա հմտորեն թափանցել է հին դարերի փիլիսոփայական ուսմունքների էության մեջ՝ տալով բնագրին հարազատ թարգմանություն։ Նա առանձին հոդված նվիրեց այդ երկի տերմինաբանության հարցին՝ ցույց տալով այն հսկայական դերը, որ մեծ փիլիսոփան կատարել է գիտական-փիլիսոփայական տերմինաբանության սկզբնավորման գործում։ Ա. Աբրահամյանը մասնակցել է Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի և այլ հեղինակների երկերի հրատարակմանը։ Նա աշխարհարար է թարգմանել, ծանոթագրել և հրատարակության հանձնել Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսական» աշխատությունը։

Մեծ է Ա. Աբրահամյանի վաստակը «Հայկական համարարբառի» սկզբունքների մշակման և մի շարք երկերի համարարբառների ստեղծման գործում (Եղնիկ Կողբացու, Փավստոս Բուզանդի, Գրիգոր Նարեկացու և այլն)։ 1978 թ. նա ղեկավարում էր ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի համարարբառի բաժինը։

Ա. Ա. Աբրահամյանը խոշոր վաստակ ունի գիտամանկավարժական կադրերի պատրաստման գործում։ Նրա ղեկավարությամբ դիսերտացիաներ են պաշտպանել հանրապետությունում արդեն ճանաչում ունեցող շատ լեզվաբաններ և մեթոդիստներ։

Պրպտուն միտք, անմնացորդ նվիրում, խոսքի կուռ տրամաբանություն, փաստարկների համոզչականություն, եզրակացությունների փաստական հիմնավորվածություն, հարցերի հանդամանալից և սպառիչ հետազոտում, գիտական բարեխղճություն, ահա նրա՝ գիտության անխոնջ մշակի բնութագրական հատկանիշները։ Նա օժտված էր դաստիարակի մեծ վարպետությամբ, ուսանողներին իր անսպառ գիտելիքներին հաղորդակից դարձնելու, մայրենիի նկատմամբ սեր ներարկելու հազվագյուտ կարողություններով։ Եվ այդ բոլորի տրամաբանական արդյունքն է այն անսահման սերն ու հարգանքը, որ տածում էին նրա նկատմամբ գործընկերներն ու ուսանողները։

Բարձր են գնահատվել նրա գիտական գործունեությունն ու վաստակը Կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության կողմից։ Նա ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ էր, գիտության վաստակավոր գործիչ, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր, պարգևատրվել էր ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրերով, եղել է ժողովրդական դեպուտատների Երևանի քաղաքային սովետի դեպուտատ։

Անվանի գիտնականն ու մանկավարժը իր գիտական վաստակով ու մանկավարժական հմտություններով երկար ժամանակ օրինակ կծառայի գիտության ու մանկավարժության բնագավառները ոտք դնող սերունդների համար։

Վ. Ա. ՔՈՍՅԱՆ